Նկարադարան

Նկարադարան

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկված է մ/մ թիվ 2 նիստում
31.08. 2018թ.
Մանագիտական մ/մ նախագահ՝ Ա.Մարգարյան

Պլան
բաց դաս-քննարկման
/Մասնագիտական ֆիլմադարանի ստեղծում/

Մասնագիտություն՝ «Ոսկերչություն՝ ոսկերիչ»
Անցկացման ամսաթիվը՝ 27. նոյեմբեր 2018թ.
Կուրս՝ III
Տևողություն՝ 1 դասաժամ
Թեմա՝ «Ոսկյա իրեր և զարդեր»
Նպատակ

- ✓ ծանոթացնել ոսկերչական իրերի և զարդերի ստեղծման ժամանակակից տեխնոլոգիաներին,
- ✓ զարգացնել ուսանողների մասնագիտական գիտելիքները,
- ✓ ստեղծել միջառարկայական կապ համակարգչային օպերատորություն և օտար լեզվի հետ՝ հարստացնելով մասնագիտական բառապաշարը,
- ✓ ստեղծել մասնագիտական ֆիլմադարան՝ պարբերաբար թարմացնելով այն /որպես դիդակտիկ նյութ հետագա օգտագործման համար/:

Նախապատրաստական փուլ
Ուսանողներին բաժանել 4 խմբի և հանձնարարել.
համացանցից ներբեռնել մասնագիտական կարճամետրաժ երկուական տեսանյութ՝ ուսումնառության ընթացքում ուսումնասիրած մոդուլների վերաբերյալ.

- ✓ *Ոսկերչական իրերի վերանորոգում*
- ✓ *Ոսկերչական քարերի տեղադրում*
- ✓ *Մարդ արծնապատում*
- ✓ *Շինվածքի հավաքում*

Թարգմանել տեսանյութերը և խմբագրված տեքստը տպել: Խմբագրված նյութը ձայնագրել DVD կրիչի վրա և հանձնել մասնագիտական մեթոդմիավորմանը:

Ընթացքը
Յուրաքանչյուր աշխատանքային խումբ պրոյեկտորի օգնությամբ ցուցադրելու, մեկնաբանելու է իր ընտրած և թարգմանած ֆիլմը: Մեկնաբանության ժամանակ ներկայացվելու է աշխատանքային գործընթացը /քայլերի հաջորդականություն, կիրառվող գործիք-սարքավորումներ և տեխնոլոգիա/:

Ակնկալվող արդյունք
Հետազոտական կարողություններով օժտված և լրացուցիչ մասնագիտական գիտելիքներով հարստացած ուսանողներ:
Նոր մասնագիտական ֆիլմերով համալրված ֆիլմադարան:

Դասավանդող՝ Խ.Եղիազարյան

Լուսաբանում

Ս/թ նոյեմբերի 27-ին «Ոսկերչություն՝ ոսկերիչ» երրորդ կուրսի ուսանողների նախաձեռնությամբ անցկացվեց «Ոսկյա իրեր և զարդեր» թեմայով մասնագիտական ֆիլմի դիտում-քննարկում, որի նպատակն էր. նույն մասնագիտությամբ առաջին և երկրորդ կուրսերի ուսանողներին ծանոթացնել ոսկերչական իրերի և զարդերի ստեղծման ժամանակակից տեխնոլոգիաներին, հարստացնել նրանց մասնագիտական գիտելիքները, ցուցադրել օտար լեզվից յուրացրած մասնագիտական բառապաշարը:

Դասի սկզբում երրորդ կուրսեցիները հանդես եկան ֆիլմադարանի ստեղծման նպատակների ներկայացմամբ և ոսկերչական արվեստի զարգացման մասին պատմական ակնարկով:

Նրանք համացանցից ներբեռնել, թարգմանել էին մասնագիտական կարճամետրաժ 5 տեսանյութ, որոնք ձայնագրել էին ինֆորմացիոն կրիչի վրա և տպագրել հայերեն թարգմանված համապատասխան տեղեկատվությունը:

Տեսանյութերն ընտրված էին մասնագիտական չափորոշչի մոդուլներից:

Պրոյեկտորի օգնությամբ ցուցադրվեցին «Ջմրուխտե և ադամանդե քարերով ականջօղի վերանորոգում», «Ոսկյա գնդերի պատրաստում», «Ադամանդե քարերով կանացի մատանու ձուլում և պատրաստում, «Խարիսխ կախազարդի սառը արծնապատում՝ արծնին փոխարինող նյութերով», «Ոսկերչական քարի ամրացում կռապանային եղանակով» թեմաներով ֆիլմերը, որոնք մանրամասն ներկայացվեցին և քննարկվեցին սովորողների կողմից:

Ծավալվեց մասնագիտական երկխոսություն, առաջին և երկրորդ կուսեցիների կողմից առաջադրված հարցերին լիարժեք պատասխան տրվեց: Ավարտական կուրսի ուսանողները կրտսեր ընկերներին հորդորեցին շարունակել իրենց նախաձեռնությունը՝ համալրելով մասնագիտական ֆիլմադարանը:

Դասավանդող՝ Խ. Եղիազարյան

Նկարադարան

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ
Քննարկված է մ/մ թիվ 2 նիստում
31.08.2018թ.
Մասնագիտական մ/մ նախագահ՝ Ա.Մարգարյան

Պլան
բաց դասի

Մասնագիտություն՝ «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում՝ ռադիոմեխանիկ»
Թեմա՝ «Խորհրդավոր ձայնը»
Կուրս՝ III
Անցկացման ամսաթիվը՝ 30.11.2018թ.
Նպատակ

- Նպաստել ուսանողների մասնագիտական գիտելիքների խորացմանը
- Ցուցադրել ուսանողների մասնագիտական կարողությունները և հմտությունները
- Ձևավորել նպատակասլացություն և վերջնարդյունքին հասնելու ձգտում
- Զարգացնել ինքնուրույն հետազոտելու և թիմում աշխատելու կարողություններ
- Ապահովել միջառակայական կապ
- Զարգացնել ուսանողների բանավոր խոսքը և ինքնաարտահայտման ունակությունը

Նախապատրաստական փուլ

- Նախապես ձևավորել թիմեր և տալ թեմայի վերաբերյալ հանձարարականներ՝ ուսումնասիրել և մշակել թեման, պատրաստել և փորձարկել բաց դասին կիրառվող սարքավորումները, պատրաստել սահիկաշար/համապատասխան տեսանյութերով հանդերձ/
- Նախապատրաստել փորձի համար անհրաժեշտ նյութերն ու պարագաները

Ընթացք

Փուլ 1. /Տեսական գիտելիքների հարորդում/

Ուսանողները ներկայացնում են հետաքրքիր և իրենց կողմից նոր բացահայտված փաստեր, բերում օրինակներ ստորև նշված թեմաների վերաբերյալ.

- ✓ ձայնի տարածումը տարբեր միջավայրերում/պինդ, հեղուկ, գազային, վակուում/
- ✓ արձագանք,
- ✓ ձայնի ուժգնություն և արագություն,
- ✓ ձայնի և լույսի համեմատությունը:

Փուլ 2. /Փորձերի անցկացում/

Ուսանողները փորձերն իրականացնում են նախատեսված թեմաների շրջանակներում՝ ուսանողների կողմից պատրաստված սարքերի, հարմարանքների միջոցով: Փորձերի անցկացմանը զուգահեռ ուսանողները տալիս են համապատասխան մեկնաբանություն:

Ամփոփման փուլ

Կատարված փորձերի արդյունքների ամփոփում մասնագետի կողմից և գնահատում

Ակնկալվող արդյունք

Լրացուցիչ գիտելիքներով հարստացած, թիմային աշխատանքի կարողությամբ օժտված, մասնագիտության կիրառման հնարավորությունները արդյունավետ օգտագործող, դրա դերը կարևորող, նպատակասլաց և տրամաբանող ուսանողներ:

Դասավանդող՝ Հ.Մարմարյան

Լուսաբանում

Ս/թ նոյեմբերի 30-ին «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում՝ ռադիոմեխանիկ» III կուրսում անցկացվեց «Խորհրդավոր ձայնը» թեմայով բաց դասը, որի նպատակն էր.

- նպաստել ուսանողների մասնագիտական գիտելիքների խորացմանը, ինքնուրույն հետազոտելու և թիմում աշխատելու կարողությունների զարգացմանը,
- ցուցադրել ուսանողների մասնագիտական կարողությունները և հմտությունները,
- ձևավորել նպատակասլացություն և վերջնարդյունքին հասնելու ձգտում:

Ուսանողները նախապես բաժանված էին թիմերի և հանձնարարված էր կատարել հետազոտական լուրջ աշխատանքներ:

Թիմային ճիշտ կազմակերպված աշխատանքի արդյունքում նրանք կարողացան գրագետ ներկայացնել և մեկնաբանել 8 լաբորատոր փորձ: Օգտագործվող սարքավորումներն ու հարմարանքները պատրաստված էին ուսանողների ձեռքով:

Դասի ընթացքում սովորողների կողմից ցուցադրվեց գեղեցիկ և հագեցած սահիկաշար, որն իր մեջ ներառում էր հետաքրքիր և ուսուցողական բնույթի կարճամետրաժ տեսանյութեր, փաստեր ստորև նշված թեմաների վերաբերյալ.

- ✓ ձայնի տարածումը տարբեր միջավայրերում/պինդ, հեղուկ, գազային, վակուում/
- ✓ արձագանք,
- ✓ ձայնի ուժգնություն և արագություն,
- ✓ ձայնի և լույսի համեմատությունը:

Գովելի էր այն փաստը, որ սովորողները միջառարկայական կապ էին ստեղծել ֆիզիկայի և ինֆորմատիկայի հետ:

Դասավանդող՝ Հ.Մարմարյան

Բաց դաս՝ «Խորհրդավոր ձայնը»

Նկարադարան

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկվել է ՈՒԽ թիվ 3 նիստում

Ծրագիր

Ուսանողի օրվան նվիրված «Քեզ համար Ազնավուր»

խորագրով միջոցառման

Միջոցառման նպատակը

- Արժևորել և գնահատել աշխարհահռչակ Շանսոնյեի ստեղծագործական ժառանգությունը
- Զարգացնել ուսանողների ստեղծագործական ունակություններ և կարողություններ
- Ձևավորել արտահայտվելու, սեփական ներուժը ներդնելու հմտություններ
- Գնահատել ուսանողների առաջընթացներն ու հաջողությունները

Միջոցառման կազմակերպիչ՝ ուսանողական խորհուրդ, հումանիտար մեթոդմիավորում

Միջոցառման ընթացքը՝

1. Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի տնօրեն՝ Ք. Ահարոնյանի շնորհավորական ուղերձը
2. Պատվոգրերի հանձնում
3. Գրական-գեղարվեստական մաս՝ նվիրված Շառլ Ազնավուրին

Ուսանողական խորհուրդ

Լուսաբանում

«Ես Ֆրանսիայում ինձ երբեք օտար չեմ զգացել, բայց մի ժամանակ երբեք չեմ մոռացել, որ հայ եմ»
Շառլ Ազնավուր

Դեկտեմբերի 5-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանողական խորհուրդն անցկացրեց «Քեզ համար Ազնավուր» խորագրով միջոցառում՝ նվիրված մարդասիրության մեծն դեսպան Շառլ Ազնավուրին:

Ուսանողները ներկայացրին նրա կենսագրությունը, ստեղծագործական դժվարին ուղին, ազգանվեր գործունեությունը, համամարդկային կերպարը:

Բեմի ձևավորումը, ստեղծված մթնոլորտը, ուսանողների մարմնավորած կերպարները ներկաներին տեղափոխել էին ֆրանսիական միջավայր, որտեղ Շահնուր Ազնավուրյանը ստացել էր եվրոպական կրթություն՝ էությամբ մնալով հայ:

Միջոցառումը համեմված էր ազնավուրյան բանաստեղծական շնչով, աշխարհահռչակ երաժշտի խոհափիլիսոփայական թեավոր մտքերով:

Հնչեցին Հայաստանին նվիրված երգեր, ինչպես նաև 1988 թվականի աղետյալ երկրաշարժի ժամանակ ծնված և աշխարհին օգնության կանչ դարձած «Քեզ համար Հայաստան» երգը, որը ներկաներն ունկնդրեցին հոտնկայս:

«Սիրել և անմնացորդ նվիրվել մարդկությանը՝ անկախ ռասայից, գույնից, կրոնական պատկանելիությունից», սրանք լոկ խոսքեր չէին Ազնավուրի համար, այլ ապրելու ձև, կեցության իմաստ, որը պատգամում էր նա ողջ մարդկությանը, երիտասարդ սերնդին:

Նա մեզ լքեց, բայց ինչ թողել է՝ հավերժ է...

Միջոցառման հանդիսավոր մասում ուսումնարանի տնօրեն Քնարիկ Ահարոնյանը շնորհակալագրեր և պատվոգրեր հանձնեց 2018 թվականի ընթացքում ուսումնարանում կազմակերպված միջոցառումներին, ուսանողական խորհրդի աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցուցաբերած, մասնագիտական, սպորտային և այլ բնագավառներում հաջողություններ ունեցած ուսանողներին, ինչպես նաև «Հայաստանի հմտություններ» ազգային մրցույթում հաղթանակ տարած «Ոսկերչություն» մասնագիտությամբ երկրորդ և երրորդ կուրսերի ուսանողներին:

Միջոցառմանը ներկա էին նաև ուսանողների ծնողները, ովքեր գնահատանքի և շնորհակալական խոսքերի արժանացան տնօրինության և ուսանողության կողմից:

Ուսխորհուրդ

Նկարադարան

Լուսաբանում

Դեկտեմբերի 6-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում անցկացվեց տեղեկատվական դաս՝ «Ես կարող եմ պաշտպանվել երկրաշարժից» խորագրով՝ նվիրված Գյումրու աղետալի երկրաշարժի 30-ամյակին: Դասախոսի և ուսանողների կողմից սահիկաշարի օգնությամբ մանրամասն ներկայացվեցին հետևյալ թեմաները. «Ինչպես նախապատրաստվել երկրաշարժին», «Ինչպես վարվել երկրաշարժի ժամանակ», «Ինչպես վարվել երկրաշարժից հետո»: Դասն ամփոփվեց Գյումրու երկրաշարժի մասին ականատեսների վկայություններով:

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկված է մ/մ թիվ 2 նիստում
31.08. 2018 թ.
Մասնագիտական մ/մ նախագահ՝ Ա.Մարգարյան

Պլան
այցելության

Մասնագիտություն՝ «Ոսկերչություն՝ ոսկերիչ»
Տիպը՝ ուսուցողա-ճանաչողական
Կուրս՝ II
Անցկացման ամսաթիվը՝ 17.12. 2018 թ.
Այցելության վայրը՝ ոսկերչական արհեստանոց

Նպատակ

- Ծանոթացնել ոսկերչական արհեստանոցի աշխատանքային գործընթացին,
- ծանոթացնել ոսկերչական զարդերի և իրերի նմուշներին,
- հարստացնել ուսանողների մասնագիտական գիտելիքները, զարգացնել գործնական կարողությունները:

Նախապատրաստական փուլ

✓ Ձեռք բերել նախնական պայմանավորվածություն
✓ Արհեստանոցի հետ ճշգրտել այցելության նպատակները

Ընթացք

Ոսկերիչ մասնագետի կողմից ուսանողներին.

- Ներկայացնել աշխատատեղի ճիշտ կազմակերպման ձևերը/ոսկերչական արհեստանոցի/,
- Ծանոթացնել ոսկերչական զարդերի և իրերի նմուշներին,
- Ծանոթացնել ոսկերչական ժամանակակից գործիք-սարքավորումներին և դրանց աշխատանքային սկզբունքներին,
- Ներկայացնել մասնագիտական հաջողությունների և ձեռքբերումների մասին անհրաժեշտ տեղեկություններ,
- Իրազեկել ձեռներեցության առանձնահատկություններին:

Այցելությունից հետո տպավորությունների կիսում:

Ակնկալվող արդյունք
Լրացուցիչ մասնագիտական գիտելիքներով հարստացած ուսանողներ

Դասավանդող՝ Ա.Մարտիրոսյան

Լուսաբանում

Ս/թ դեկտեմբերի 17-ին «Ոսկերչություն՝ ոսկերիչ» II կուրսի ուսանողներն այցելեցին ոսկերչական արհեստանոց:

Այցելության նպատակն էր.

- **ծանոթացնել ոսկերչական արհեստանոցի աշխատանքային գործընթացին,**
- **ծանոթացնել ոսկերչական զարդերի և իրերի նմուշներին,**
- **հարստացնել ուսանողների մասնագիտական գիտելիքները, զարգացնել գործնական կարողությունները:**

Այցելության սկզբին արհեստանոցի վարպետ մասնագետը ուսանողներին ներկայացրեց աշխատատեղի կազմակերպման ճիշտ ձևերը: Այնուհետև սովորողներն ուսումնասիրեցին ոսկերչական զարդերի և իրերի նմուշները: Ոսկերիչ մասնագետի և ուսանողների միջև ծավալվեց մասնագիտական զրույց-քննարկում հետևյալ թեմաների շուրջ.

- ✓ ոսկերչական ժամանակակից գործիք-սարքավորումներ,
- ✓ գործիք-սարքավորումների աշխատանքային սկզբունքները:

Զգալի էր և խրախուսական ուսանողների նպատակասլացությունը ոսկերչություն մասնագիտության մեջ նոր ձեռքբերումներ կերտելու մղումը:

Ա/ու վարպետ՝ Ա.Մարտիրոսյան

Նկարադարան



Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկված է մ/մ թիվ 2 նիստում
29.08.2018թ.
Հումանիտար մ/մ նախագահ՝ Ք. Գրիգորյան

ԲԱՑ ԴԱՍԻ ՊԼԱՆ

Առարկա՝ ռուս գրականություն

Թեմա՝ 20-դարի արգելված գրականություն՝ Աննա Ախմատովա

Դասի նպատակը

1. Ծանոթացնել ռուս բանաստեղծուհի Աննա Ախմատովայի գրական ժառանգությանը, նրա քաղաքական հայացքներին, ճանաչել նրան որպես քաղաքացի և որպես բանաստեղծ:
2. Ներկայացնել նրան իր ապրած ժամանակի մեջ:
3. Հարստացնել ուսանողների ճանաչողական գիտելիքները, առաջացնել հետաքրքրություն և սեր բանաստեղծական խոսքի հանդեպ:

Դասի ընթացքը

1. Ներկայացնել Աննա Ախմատովայի կենսագրության առավել հետաքրքրական դրվագները/ բանավոր խոսք և սահիկաշար/:

2. Կարդալ բանաստեղծությունները, վերլուծել դրանք՝ վեր հանելով բանաստեղծուհու կերպարը՝ որպես մարդ-քաղաքացի-հայրենասեր:

3. Ցույց տալ նրա ստեղծագործությունների արդիական հնչեղությունը և դաստիարակչական նշանակությունը:

Ակնկալվող արդյունք

Կունենանք Ա. Ախմատովայի գրական ժառանգությանը ծանոթ ուսանողներ, ովքեր կարժևորեն խոսքի ազատությունը, քաղաքացիական պարտքի կարևորությունը հայրենիքի և ժողովրդի հանդեպ:

Դասավանդող՝ Ն. Մանուկյան

Լուսաբանում

Դեկտեմբերի տասներեքին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում անցկացվեց ռուսաց լեզվից բաց դաս՝ <20-դարի արգելված գրականություն՝ Աննա Ախմատովա> խորագրով: Բաց դասին մասնակցում էին առաջին և երկրորդ կուրսերի ուսանողները:

Դասի նպատակն էր ծանոթացնել ռուս բանաստեղծուհի Աննա Ախմատովայի գրական ժառանգությանը, նրա քաղաքական հայացքներին, ճանաչել նրան որպես քաղաքացի և որպես բանաստեղծ: Հարստացնել ուսանողների ճանաչողական գիտելիքները, առաջացնել հետաքրքրություն և սեր բանաստեղծական խոսքի հանդեպ:

Ուսանողները ներկայացրին Աննա Ախմատովայի կենսագրության առավել հետաքրքրական դրվագները՝զուգահեռ ցուցադրելով նրան վերաբերող հետաքրքիր սահիկաշար: Կարդացին Ախմատովայի ստեղծագործություններից, վերլուծեցին դրանք՝ վեր հանելով բանաստեղծուհու կերպարը՝որպես մարդ-քաղաքացի և հայրենասեր: Խոսեցին ընդհանրապես <արգելված գրականություն հասկացության> մասին, որը հետագայում պիտի դատապարտվեր որպես ամոթալի, արատավոր երևույթ: Այն ոչ միայն վնաս հասցրեց գրականությանը, այլև խեղաթյուրեց մարդկային շատ ճակատագրեր:

Դասը համեմված էր բանաստեղծուհու ստեղծագործությունների հիման վրա գրված երգերով: Բաց դասն ամփոփվեց ուսանողների կողմից պատրաստված պաստառով, որի միջոցով նրանք արտահայտեցին իրենց ստացած տպավորությունները՝ Ախմատովայի կյանքի և ստեղծագործությունների մասին, նշեցին դրանց արդիական հնչեղությունը և համաշխարհային նշանակությունը:

Հումանիտար մեթոդմիավորում

Նկարադարան

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Պլան

1988թ. աղետյալ երկրաշարժի 30 տարվան նվիրված **«Մեջքդ շտկե՛ Գյումրի քաղաք»** խորագրով միջոցառման

Անցկացման ամսաթիվը՝ 14. 12. 2018թ.

Տիպը՝ հուշ-ցերեկույթ

Նպատակ

- Հարգանքի տուրք մատուցել աղետյալ երկրաշարժի անմեղ զոհերին
- Ցույց տալ գյումրեցու անկոտրուն, պայքարելու ոգին
- Դաստիարակել մարդասիրություն և կամային որակներ

Ընթացք

- Թատերական դրվագ /խաղաղ ընտանիքի պատկեր /
- Տեղեկատվության և իրական փաստերի ներկայացում Երկրաշարժի վերաբերյալ/սահիկահանդեսի զուգակցմամբ/
- Ոգեկոչման արարողություն

Ակնկալվող արդյունք

1. Ուսանողների մոտ կձևավորվի օրինակելի հայ ընտանիքի օրինակելի մոդելը:
2. Ուսանողը կիմանա 1988թվականին Սպիտակի երկրաշարժի մասին:
3. Ուսանողները կմոտիվացվեն հայրենասիրությամբ՝ Գյումրի շենացնելու ձգտումով:

Մասնագիտական, հումանիտար, բնագիտամաթեմատիկական մեթոդմիավորումներ

Լուսաբանում

Սովորական դեկտեմբերյան մի օր... Ոչնչով չտարբերվող մյուս օրերից: Դպրոցական աղջնակը դասավորում է պայուսակը, հետն էլ շաղակրատում և ծիծաղում է մոր հետ: Հանկարծ լսվում է մի ահեղ դղրդոց... ամեն ինչ խառնվում է, փշրվում է ծիծաղը, խլանում՝ ձայները, կանչերը մնում են անպատասխան: Թատերական այս հուզիչ դրվագով սկսվեց Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում անցկացված «Մեջքդ շտկե՛ Գյումրի քաղաք» խորագրով միջոցառումը՝ նվիրված 1988 թվականի աղետալի երկրաշարժի 30-ամյա տարելիցին:

30 տարի. ժամանակի հավերժության հանդեպ այն մի ակնթարթ է, իսկ աղետ տեսած գյումրեցու համար վշտի ու ցավի, հուսահատության, խավարի, լույսի ու հավատի տարիներ: Լսելով ուսանողների բանաստեղծական խոսքը, դիտելով այդ աղետալի օրը պատկերող դրվագները՝ ներկաները հասկացան, որ ոչինչ և ոչ ոք չի մոռացվել: Միջոցառման երկրորդ հատվածը շնչում էր լավատեսությամբ, օր օրի վեր հառնող Գյումրվա պատկերով, ապագայի նկատմամբ խոր հավատով ու հույսով:

Միջոցառումը զուգակցվում էր աշուղական երգի, դուդուկի, պարի անզուգական կատարումներով:

Ուսանողների ոգեշնչող խոսքերը փաստում էին այն իրողությունը, որ Գյումրին պիտի շտկե մեջքը, պիտի կանգնի հպարտ, գլուխը բարձր, որովհետև նա մարդկանց ու աշխարհին միշտ էլ ասելիք ունի...

Հայոց լեզվի և հայ գրականության դասախոս՝ Ք. Գրիգորյան

Նկարադարան

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկված է մ/մ թիվ 2 նիստում

31.08.2018թ.

Մասնագիտական մ/մ նախագահ՝ Ա.Մարգարյան

Պլան

բաց դասի

Մասնագիտություն՝ «Վարսավիրական արվեստ և գարդային դիմահարդարում՝ վարսահարդար»
Թեմա՝ «Իմ մասնագիտությունը վարսավիրական արվեստն է»
Կուրս՝ II
Անցկացման ամսաթիվ՝ 20.12.2018 թ.

Նպատակ

- հարստացնել մասնագիտական գիտելիքները,
- ձևավորել ինքնուրույն աշխատելու կարողություն,
- ձևավորել տեղեկույթը փնտրելու, մշակելու և ներկայացնելու կարողություն,
- արժևորել ընտրած մասնագիտությունը,
- ցուցադրել մասնագիտական կարողությունները,
- սերմանել գեղեցիկը գնահատելու կարողություն:

Նախապատրաստական փուլ

Փնտրել թեմայի շուրջ անհրաժեշտ տեղեկույթ, ըստ թեմայի կազմակերպել գործնական աշխատանքների ճիշտ կատարման գործընթացը/կանացի կտրվածքների ստացում՝ շերտավոր կտրվածք «կասկադ», դասական կառռ, տոնական սանրվածք/,նկարահանել համապատասխան տեսանյութեր և ստեղծել թեմատիկ սահիկաշար:

Դասի ընթացք

- ✓ Ներկայացնել «Իմ մասնագիտությունը վարսավիրական արվեստն է» նախաբանը,
- ✓ ներկայացնել մասնագիտության առանձնահատկությունները,
- ✓ ցուցադրել մասնագիտական սահիկաշարը՝ մեկնաբանելով ընթացքը,
- ✓ ցուցադրել նախապես մոդելավորած սանրվածքների կատարման ընթացքը ներառող տեսանյութերը՝ մեկնաբանելով ընթացքը,
- ✓ ցուցադրել արդեն իսկ մոդելավորած սանրվածքները,
- ✓ կարծիքների և տեսակետների ներկայացում, քննարկում:

Ակնկալվող արդյունք

Մասնագիտական գիտելիքներով հարստացած, կարողություններով հմտացած, հետազոտական աշխատանքներ կատարելու ունակություններով և գեղագիտական ճաշակով օժտված, ուսանողներ:

Դասավանդող՝ Ա. Ղանդիլյան

Լուսաբանում

Ս/թ դեկտեմբերի 20-ին «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար» II կուրսում անցկացվեց «Իմ մասնագիտությունը վարսավիրական արվեստն է» թեմայով բաց դաս, որի նպատակն էր ուսանողների մոտ.

- հարստացնել մասնագիտական գիտելիքները,
- ձևավորել ինքնուրույն աշխատելու կարողություն,
- ձևավորել տեղեկույթը փնտրելու, մշակելու և ներկայացնելու կարողություն,
- արժևորել ընտրած մասնագիտությունը,
- ցուցադրել մասնագիտական կարողությունները,
- սերմանել գեղեցիկը գնահատելու կարողություն:

Ուսանողները բաց դասը սկսեցին սահիկաշարի ցուցադրմամբ, ներկայացրին ընտրած մասնագիտության առանձնահատկությունները, դրա արդիականությունը, կիրառման ոլորտները/ոճաբան, վարսահարդար/:

Ցուցադրվեց և ներկայացվեց ուսանողների կողմից մոդելավորած ժամանակակից սանրվածքները/ շերտավոր կտրվածք «կասկադ», դասական կառե, տոնական սանրվածք/:

Գովելի էր այն փաստը, որ կանացի սանրվածքների ստացման հաջորդական քայլերը նախապես նկարահանվել էր և որպես տեսանյութ՝ մատուցվեց հանդիսատեսին:

Բաց դասն ավարտվեց վերը նշված թեմաների շուրջ կարծիքների ու տեսակետների քննարկումով:

Դասավանդող՝ Ա.Ղանդիլյան

Նկարադարան

Լուսաբանում

2019 թվականի մայիսի 24-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի դահլիճում տեղի ունեցավ «Վերջին զանգ» միջոցառումը:

Արտասովոր հուզմունք կար թե՛ ուսանողների, թե՛ մանկավարժների, և թե՛ ծնողների սրտերում:

Դահլիճում ստեղծվել էր պահին համահունչ ներդաշնակություն. ասմունքից, երգ ու պարից զատ՝ զրույցի էին բռնվել նաև բոլորի սրտերը: Ավարտական չորս կուրսերի ուսանողները շնորհակալության և երախտիքի խոսքեր նվիրեցին մանկավարժներին՝ գնահատելով Ուսուցչի հայրենանվեր, լուսավոր աշխատանքի վեհությունը: Ոգևորիչ ու տպավորիչ էր հատկապես բեմադրված հայկական պարը, որն ուսանողները նվիրեցին հայրենիքի պաշտպան զինվորներին:

Կյանքում ամեն ինչ հաղթահարելի է, քանի որ ուսումնառության տարիներին ուսանողները ձեռք են բերել նաև մասնագիտական գիտելիքներ և կարողություններ, ստացել են հայեցի դաստիարակություն, ոգեշնչվել հայրենասիրական դասերով:

Միջոցառման ավարտին տնօրինության կողմից շնորհակալագրեր հանձնվեցին այն ուսանողներին, ովքեր ուսումնառության ընթացքում ունեցել են ձեռբերումներ և հաջողություններ տարբեր բնագավառներում:

Հնչեց վերջին զանգը: Միջոցառումը սահուն և գեղեցիկ կերպով հասավ իր տրամաբանական ավարտին:

Հրաժեշտի հուզիչ պահը ստիպեց ուսանողներին խորհել, որ վերջին զանգի ղողանջներով ազդարարվում է չափահասության և նոր կյանքի սկիզբը:

Ս. Էլբակյան

Նկարադարան

Լուսաբանում

Մայիսի 27-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում անցկացվեց «Հավերժական փառք» խորագրով միջոցառում՝ նվիրված մայիսյան փառահեղ հաղթանակներին: Միջոցառման նպատակն էր արժևորել Մայիսյան հերոսամարտերը՝ որպես հայ ժողովրդի ազատագրական պայքարի փայլուն էջ, բարձրացնել սաների հայրենասիրական ոգին, հերոսների օրինակով ձևավորել հայրենիքը պաշտպանելու պատրաստակամություն, դժվարություններին դիմակայելու և հաղթահարելու կամք:

Միջոցառումն ազդարարվեց Սարդարապատի, Հայրենական Մեծ պատերազմի, Արցախյան և ապրիլյան քառօրյա պատերազմների հաղթանակների առիթով շնորհավորանքներով:

Միջոցառման մասնակիցները ներկայացրին պատմական փաստեր, հաղթական դրվագներ մայիսյան հաղթանակների բովից, նրանք հանդիսատեսին ներկայացան հայ ժողովրդի հերոսների նկատմամբ երախտագիտության և խոնարհման արտահայտմամբ:

Հնչեցին մայիսյան հերոսամարտերից ծնունդ առած երգերը, որոնք էլ ավելի ոգևորիչ ու ամբողջական դարձրին միջոցառման ընթացքը:

Տպավորիչ ու հուզիչ էին ազատագրական պայքարի հերոսների օրինակով դաստիարակված դեռահասների խոնարհումի և ոգեկոչման խոսքերը.

«Գնացին նրանք գարուն բերելու, այսօր և ընդմիշտ մեր սերունդները խոնարհվում են քաջերի շիրիմների առաջ, ոգեկոչվում հերոսների անմահ սխրանքներով, ովքեր ոչ միայն կռվել են, այլև հաղթել են թշնամուն, հաղթական պարերի բոցաշունչ երգով ու կանչով... Հիշենք մեր բոլոր զինվորներին, ովքեր թիկունքում ունենալով հայրենի հողը, մինչև վերջ պայքարեցին և արյամբ ձեռք բերեցին այս անգնահատելի հաղթանակը՝ անկախությունը»:

Հավերժական փառք Մայիսյան փառահեղ հաղթանակները կերտած հերոսներին...

Ս. Էլբակյան

Նկարադարան

ԿԱՐԻԵՐԱՅԻ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ